



Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ

Հոգեգալուստ
28 ՄԱՅԻՍ 2023

Կիրակնօրեայ Ընթերցումներ Էջ 1
Ծանուցում Էջ 2

ԸՆԹԵՐՑՈՒՄ «ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ» ԳԻՐՔԷՆ (2.1-21)

Երբ Պենտէկոստէի օրը հասաւ, բոլոր հաւատացեալները միասնաբար մէկտեղուած էին: Յանկարծ սաստիկ հովի մը սուլոցին պէս ձայն մը հնչեց երկինքէն եւ լեցուց ամբողջ տունը ուր անոնք նստած էին: Յետոյ անոնք հրեղէն լեզուներ տեսան, որոնք տարածուեցան եւ հանգչեցան իւրաքանչիւրին վրայ: Բոլոր ներկաները Սուրբ Հոգիով լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներ խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար:

Այն օրը Երուսաղէմ քաղաքը լեցուն էր բարեպաշտ հրեաներով, որոնք աշխարհի չորս կողմերէն եկած էին: Երբ այս ձայնը լսուեցաւ, մեծ բազմութիւն մը եկաւ խոնուեցաւ այնտեղ եւ բոլորը անակնկալի եկան, որովհետեւ կը լսէին թէ ի՛նչպէս անոնք իրենցմէ իւրաքանչիւրին լեզուով կը խօսէին: Ամէնքն ալ սքանչացումով

եւ զարմանքով կ'ըսէին իրարու. «Այս խօսողները բոլորն ալ Գալիլիացիներ չե՞ն միթէ. ի՞նչպէս կ'ըլլայ որ մեր ծննդավայր երկիրներու լեզուներով կը խօսին, ինչպէս ահաւասիկ կը լսենք: Չէ՞ որ ահա մեր մէջ կան պարթեւներ, մարեր, ելամացիներ, միջագետացիներ, հրեաներ, կապադովկիացիներ, պոնտացիներ, ասիացիներ, փոիւզիացիներ եւ պամփիլիացիներ, եգիպտացիներ, Կիւրենիայի շրջանէն լիպիացիներ, Հռոմէն եկած հրեայ եւ հրէութեան դարձած այցելուներ, կրետացիներ եւ արաբիացիներ: Եւ ահա բոլորս ալ մեր լեզուներով իրենցմէ կը լսենք Աստուծոյ մեծամեծ գործերուն մասին»: Ապշահար, անոնք զարմանքով կը հարցընէին իրարու. «Ի՞նչպէս կարելի է բացատրել ասիկա»: Իսկ ոմանք կատակելով կ'ըսէին. «Նոր գինիով գինովցած են»:

Այն ատեն Պետրոս տասնըմէկ առաքեալներուն հետ ոտքի ելաւ եւ բարձրաձայն սկսաւ անոնց խօսիլ.-

«Ո՛րվ հրէաստանցիներ եւ դուք որ հիմա Երուսաղէմ կը գտնուիք. իրականութիւնը գիտնալու համար լսեցէ՛ք ինչ որ պիտի ըսեմ: Դուք կը կարծէք թէ ասոնք գինով են. բայց այդպէս չէ, որովհետեւ առտուան ժամը

ինն է դեռ: Մինչդեռ ասիկա կատարումն է Յովելի մարգարէութեան որ կ'ըսէ.

«Այնուհետեւ երբ վերջին օրերը գան, - կ'ըսէ Աստուած, - իմ Հոգիս պիտի թափեմ բոլոր մարդոց վրայ. ձեր տղաքն ու աղջիկները իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի, ձեր երիտասարդները տեսիլներ պիտի ունենան եւ ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն:

Երկինքի բարձունքին վրայ հրաշքներ պիտի ցուցնեմ, եւ նշաններ՝ վարը երկրի վրայ.

Այն օրերուն իմ Հոգիս պիտի թափեմ նաեւ իմ ծառաներուն եւ աղախիներուն վրայ, եւ անոնք եւս իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի:

Երկինքի բարձունքին վրայ հրաշքներ պիտի ցուցնեմ, եւ նշաններ՝ վարը երկրի վրայ. աշխարհ արիւնով, կրակով ու թանձր ծուխով պիտի լեցուի, արեւը պիտի խաւարի եւ լուսինը արիւնի գոյն պիտի առնէ, եւ ի վերջոյ պիտի հասնի Տիրոջ մեծ եւ անեղ օրը: Այն ատեն ով որ Տէրը օգնութեան կանչէ՝ պիտի փրկուի»:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ (14.25-31)

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.- «Այս բոլորը խօսեցայ ձեզի, քանի տակաւին ձեզի հետ եմ: Բայց Միտիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը ձեզի պիտի զրկէ իմ անունովս, ան ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի: Խաղաղութիւն

կը թողում ձեզի. իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է: Մի՛ խռովիք եւ մի՛ վախճաք: Լսեցիք ինչ որ ըսի ձեզի, թէ «Ահա կ'երթամ, բայց կրկին պիտի գամ ձեզի»: Եթէ զիս կը սիրէք, ուրախ պիտի ըլլաք որ Հօրս կ'երթամ, որովհետեւ Հայրս ինձմէ մեծ է: Այս բոլորը ձեզի ըսի նախ քան պատահիլը, որպէսզի երբ պատահի՝ այն ատեն հաւատաք: Այլեւս երկար պիտի չխօսիմ ձեզի, որովհետեւ ահա կու գայ այս աշխարհի իշխանը, որ իմ վրաս ոչ մէկ իշխանութիւն ունի: Բայց աշխարհը պէտք է գիտնայ թէ ես Հայրը կը սիրեմ եւ ա՛յդ է պատճառը որ ինձի բոլոր պատուիրածները կը կատարեմ: Ելէ՛ք, երթանք այստեղէն»:

Իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է:

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՆՍՕՐՕՔ ԿԱՏԱՐԵՃԷՔ ԿԱՊՈՒԵԼՈՎ ԵԿԵՂԵՅՈՂ ԳՐԱՍԵՆԵԱԿ:

ԹԵՐԹԻԿԻ ԱՆՍՈՐՈՂ ԹԻԲԵՐՈՒ ԿՐԱՔ ԳՏԱԵԼ www.sourphagop.net ԿԱՂԲԷՉԻՆ ՎՐԱՅ

ՍՈՅՆ ԹԵՐԹԻԿԻ Ե-ԱՆԱՄԱԿՈՎ ԱՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՄՅՄԵՆ ՈՒՊԱՐԿԵՅՏԷՔ eglise@sourphagop.net